# «ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՁՈՒԶԵՊՊԵ ԳԱՐԻԲԱԼԴՈՒ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ*

**Ֆելիքս Մովսիսյան**

***Բանալի բառեր***՝ Իտալիա, ազատություն, պայքար, միավորում, Գարիբալդի, «Մասյաց աղավնի», հայրենասեր, քաջազուն, ազատարար, զորավար:

*Ավստրիական տիրապետության դեմ իտալական ժողովրդի XIX դարի ազգային-ազատագրական պայքարին իրենց ուսումնասիրություններում և հրապարակումներում անդրադարձել են հիմնականում Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամները: Անկախության և ազգային միավորման համար իտալացիների մղած պատերազմները լայնորեն լուսաբանվել է նաև արևմտահայ պարբերական մամուլում: Դա մասամբ պայմանավորված է նրանով, որ որոշ պարբերականներ, անկախ իրենց գաղափարական ուղղվածությունից, արևմտահայության ազատագրության հույսերը կապում էին եվրոպական ազգային-ազատագրական շարժումների հաղթանակի հեռանկարի հետ:*

*XIX դարի իտալական ազատագրական պայքարի նկատմամբ անտարբեր չի մնացել նաև ռուսահայ պարբերական մամուլը՝ հատկապես «Մասյաց աղավնի» ամսագիրը, որի դիրքորոշումը հայ պատմագրության մեջ հիմնավոր ուսումնասիրված չէ: Ռուսահայ պարբերականներից ոչ մեկն այնքան ընդգծված հետաքրքրություն չի դրսևորել իտալական ազատագրական պայքարի և դրա ղեկավարների նկատմամբ, որքան «Մասյաց աղավնին»: Այս պարբերականի հիմնադիրն ու տնօրեն ղեկավարը Գաբրիել վարդապետ Այվազովսկին (1812-1880) էր՝ հայ ազգային-պահպանողական հոսանքի երևելի դեմքերից մեկը: Նա հայ պարբերական մամուլի պատմության մեջ այն եզակի խմբագիրն է, ով ոչ միայն իտալական ազգային պայքարի խորագիտակներից էր, այլև այդ պայքարի անմիջական ականատեսը: Մխիթարյանների միաբանության «Բազմավեպ» հանդեսի խմբագիր Գ. վրդ. Այվազովսկին, անդրադառնալով 1848թ. մարտին վենետիկցիների ժամանակավոր ազատագրմանը, «Վենետիկ քաղաքին նոր ազատութիւնը» հոդվածում [1], բառեր չէր գտնում նկարագրելու «Իտալիոյ ժողուրդոց ցնծութիւնը» և անպատմելի ուրախությունը, որն իր ազատության կապակցությամբ «հեղեղի պես լցվեց» սուրբ Մարկոսի հրապարակը և իսկական տոնախմբություն կազմակերպեց: Ափսոսանք հայտնելով, որ վենետիկցիների ուրախությունը «առանց տրտմութեան չվերջացաւ» ու նրանք շուտով «մեծ տագնապի մեջ ընկան»[2], Գ. վրդ. Այվազովսկին բացահայտում է Մխիթարյանների դիրքորոշումն իտալացիների հետագա պայքարի նկատմամբ: Նա հավաստում է, որ «իբրև օտար ու բարեկամ տերութեան հաւատարիմ հպատակք և իբրև պատուական հայեր», այսուհետև մնալու են Իտալիայում տեղի ունեցող «այս ամեն փոփոխութեան անխռով սրտիւ հանդիսատես»[3]: Որպես Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ և «Բազմավեպ» հանդեսի խմբագիր՝ Գ. վրդ. Այվազովսկին պահպանեց Մխիթարյանների «բռնած ուղղութիւնը», որը միշտ կաշկանդում էր իր «հեղինակների գրիչը, միշտ արգելք է եղել նոցա ազատ և բազմակողմանի զարգացմանը»[4]: Այդ կաշկանդվածությունը նա հաղթահարեց, երբ 1849թ. սկզբին հեռացավ «Բազմավեպի» խմբագրությունից, իսկ 1855թ.՝ նաև Մխիթարյան միաբանությունից: Դա հնարավորություն տվեց Գ. վրդ. Այվազովսկուն*

---

* Հոդվածն ընդունվել է 01.04.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի պատմության ամբիոնը: 07.04.21:

համեմատաբար ավելի ազատ ու անկաշկանդ ներկայացնել իր դիրքորոշումը 1859թ. սկսված իտալական ազատագրական պայքարի և դրա ղեկավարների վերաբերյալ: Այդ հարցերին նա անդրադարձել է իր խմբագրած «Մասյաց աղավնի» ամսագրում, որը 1855-1858թթ. լույս էր տեսնում Փարիզում, իսկ 1860-1865թթ.՝ Թեոդոսիայում:

Այս ամսագրի հրապարակումներում Գ. վրդ. Այվազովսկին պահպանել է իր պարտավորվածությունը՝ «պատկառելի ու սիրելի մնալ այս հիւրընկալ երկրի յեղափոխութեանց մէջ»[5] և անթաքույց իր համակրանքն արտահայտել ազատության համար պայքարի ելած իտալացիների նկատմամբ: Ռուսական Թեոդոսիայում այդ հարցում նա ոչնչով կաշկանդված չէր, մանավանդ, որ ռուսական կառավարող շրջանների դիրքորոշումը Իտալիայի միավորման հարցում Ղրիմի (Արևելյան) պատերազմից հետո երկակի էր: Այն սկզբում բարեհաճ ու կարեկցական էր, բայց երբ Ջ. Գարիբալդին իր կամավորներով մտավ Նեապոլիտանական թագավորության մայրաքաղաք, Ալեքսանդր II-ը Ավստրիայի կայսր Ֆրանց Իոսիֆին խորհուրդ տվեց ինչ որ բան ձեռնարկել[6]: Ռուսաստանը թեև դիվանագիտական հարաբերությունները Սարդինական թագավորության հետ խզեց, բայց Ֆրանցիսկ II-ի օգնության բոլոր խնդրանքներն անտեսեց: Ռուսական հասարակական կարծիքը, ընդհանուր առմամբ, հակաիտալական չէր[7], իսկ ժողովրդավարական ուժերը, մամուլը և առաջադեմ մտավորականները համակրանքով էին արտահայտվում Ջ. Գարիբալդու պայքարի նկատմամբ[8]:

Իտալական ազատագրական պայքարը «Մասյաց աղավնին» լուսաբանում է «Տեսություն արտաքին քաղաքական անցից» խորագրում, որոնց հիմնական հեղինակը Գ. վրդ. Այվազովսկին էր: Այդ քաղաքական հրապարակումները «ցույց են տալիս, որ Այվազովսկին չի դավաճանել իր հիմնական հայեցությանը»[9] և ճիշտ է ընկալել իտալական ժողովրդի պայքարի ազատագրական ու հայրենասիրական բնույթը: Գ. վրդ. Այվազովսկին իտալացիների պայքարը լուսաբանում է եվրոպական պաշտոնական, երբեմն էլ ոչ պաշտոնական լրատվության, ստացված հեռագրական լուրերի և մամուլի հրապարակումների հիման վրա: Իտալական խնդրին քաջածանոթ լինելը, եվրոպական մի շարք լեզուների (իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն) տիրապետելը և պատմաբանի գիտելիքները [10] նրան հնարավորություն էին տալիս իտալացիների պայքարը ներկայացնել համակողմանիորեն՝ ստացված լուրերի համադրության ու վերլուծության հիման վրա: Գ. վրդ. Այվազովսկին իրավացիորեն ընդգծում է, որ իտալացիների զենք վերցնելու հիմնական պատճառը Հաբսբուրգների արքայատոհմի «բռնած կառաւարութեան կերպն է», տնտեսական և քաղաքական անասելի շահագործումը, որի հետևանքով «խեղճ Իտալիան ծայրէ ի ծայր տակն ու վրայ եղած է»[11]:

Ի թիվս իտալական ազատագրական պայքարի մի շարք խնդիրների՝ Գ. վրդ. Այվազովսկին «Մասյաց աղավնու» հրապարակումներում անդրադառնում է նաև այդ պայքարի ղեկավարների գործունեությանը: Բավական հավաստի տվյալներով ներկայացնելով 1859թ. մարտին սկսած իտալական երկրորդ պատերազմի ընթացքը՝ Գ. վրդ. Այվազովսկին խորագիտակ պատմաբանի գնահատմամբ իտալացիների ազգային պայքարի ղեկավարներ համարում է Պիեմոնտի թագավոր Վիտորիո Էմմանուել II-ին (1820-1878), կառավարության ղեկավար կոմս Կամիլո Կավուրին (1810-1861) և հայրենասեր զորավար Ջուզեպպե Գարիբալդուն (1807-1882): Ըստ ամսագրի՝ Վիտորիո Էմմանուել II-ը, «թշվառ պարագաներու մէջ» ժառանգելով գահը, արիաբար տարավ «հայրենեացն աղէտքները», անձնական ողբերգությունները, այդ ամենից ամենևին չվիատվեց և հարմար առիթի սպասելով՝ Ավստրիայի դեմ պատերազմ սկսեց, որպեսզի «հայրենիքը իւր կործանմանէն վերականգնէ»[12]: 1861թ. մարտին Իտալական թագավորության հռչակման գործում բարձր գնահատելով Վիտորիո Էմմանուել II-ի անձնական ներդրումը՝ «Մասյաց աղավնին» նրան համարում է «ժամանակիս ամենէն անուանի թագաւորներէն մեկը, որու անունը Եվրոպիոյ արդի պատմութեանը մէջ պատուաւոր տեղի մը պիտի ունենայ»[13]: «Մասյաց աղավնին» Իտալական թագավո-

*ության կայացման գործում կարևորում է նաև վարչապետ Կ. Կավուրի և Բետտինո Ռիկազոլիի (1809-1880) ջանքերը: Կ. Կավուրին համարելով «իտալական ինքնիշխանութեան գլխաւոր պատճառներէն մէկը»՝ ամսագիրը նրան բնութագրում է որպես «հռչակաւոր մարդ, հայրենասէր քաղաքագետ, խոհական խորհրդական, գործունեա անխոնջ իշխանաւոր», քանզի «բոլոր իւր կեանքը նուիրեր է, ազատ, միացեալ եւ զօրաւոր ընելու Իտալիան»[14]:*

*«Մասյաց աղավնու» բնութագրմամբ՝ Բ. Ռիկազոլի «մեծանուն քաղաքագետը», շնորհիվ իր հաստատուն բնավորության, երկաթյա կամքի և հեռատեսության, վաղուց ճանաչված դեմք է Իտալիայում: Նա, ի տարբերություն Կ. Կավուրի, «Իտալիոյ ինքիշխանութեան» ճանաչման գործում եվրոպական պետությունների «օգնութիւնը հարկաւոր կճանչնա»[15]:*

*Իտալացիների հայրենասիրական և ազատագրական պատերազմը ներկայացնելիս «Մասյաց աղավնին» առանձնահատուկ ընդգծում և կարևորում է Ջուզեպպե Գարիբալդու դերը, ում պայքարի մասին անթաքույց համակրանքով է պատմում: Ամսագիրը իտալացիների «մօտաւոր ազատութեան ավետիսի»[16] և իտալական պատերազմի պատմությունով հետաքրքրվողների համար կարևորում է «Կարիպալտի զօրավարի կենդանագիրը տեսնելը ու պատմութիւնը գիտնալը»: Առաջնորդվելով այս մտայնությամբ՝ Գ. վրդ. Այվազովսկին տպագրում է նրա մեծադիր գծանկարը և համառոտ կենսագրությունը: Նա Ջ. Գարիբալդու ազգատոհմը համարում է Սարդինիայի պատվավոր գերդաստաններից մեկը, որն անվանի շատ նավապետեր է տվել: 1807թ. հուլիսի 4-ին Նիցցայում ծնված Ջ. Գարիբալդին մանուկ հասակում շփվել է նավաստիների ու ձկնորսների հետ, բազմաթիվ դժվարություններ և «զարմանալի չարքաշություններ» հաղթահարել ու Սարդինիայի նավատորմում նավաստի դարձել: Ամսագրի բնութագրմամբ՝ նավաստի Ջ. Գարիբալդին շնորհիվ «իւր բնական ու բարոյական քաջութեամբն ու անխռով բարուքը անուանի եղաւ»[17]:*

*Ամսագիրը բավական հավաստի ներկայացնելով Ջ. Գարիբալդու ծագումը և նավարար դառնալը[18]՝ փաստում է, որ երիտասարդ տարիքում նա անդամագրվել է հայրենիքի ազատության համար պայքարին: «Մասյաց աղավնին» ազատագրական է համարում Ջ. Գարիբալդու մասնակցությունը 1834թ. «Իտալիոյ ազատութեան համար ելած ապստամբութեանը»[19], որի պարտությունից հետո փախել է Ֆրանսիա: Ամսագիրը նկատի ունի 1833թ. սեպտեմբերին Ջուզեպպե Մացցինիի (1805-1872) գլխավորած «Երիտասարդ Իտալիա» գաղտնի ընկերության նախաձեռնությամբ Սավոյայում զինված ներխուժման անհաջողությունը, որից հետո Ջ. Գարիբալդին 1834թ. փետրվարի 4-ին փորձեց ապստամբություն բարձրացնել Ջենովայում: Անհաջողություն կրելով՝ Ջ. Գարիբալդին փախավ Նիցցա, ապա հաստատվեց Մարսելում[20]: Այնուհետև որպես ծովային սպա ծառայել է Թունիսի բեյին և իր «աշխուժին ու գործունեութեանը բաւական նիւթ չգտնելով»[21]՝ մի ամիս հետո մեկնել է Հարավային Ամերիկա, ծառայել Բրազիլիայում, դարձել Ուրուգվայի և Արգենտինայի դեմ ուղարկված նավախմբի հրամանատար: Բավական հավաստի ներկայացնելով Ջ. Գարիբալդու ոդիսականը Հարավային Ամերիկայում[22]՝ ամսագիրը գրում է, որ այստեղ նա կռվել է և այնպիսի քաջություն ու հնարագիտություն ցուցաբերել, որ շատերը զարմացած ասում էին. «նա մարդ չէ, դեւ է»[23]:*

*«Մասյաց աղավնին» Ամերիկայում Ջ. Գարիբալդու պայքարի բնույթը, ընթացքը և հետապնդած նպատակը չի բացահայտում, այլ նախընտրում է ընթերցողներին ներկայացնել նրա զինվորական ընդունակություններն ու հնարամիտ գործողությունները: Ամսագիրը նրան բնութագրում է որպես քաջ, խիզախ և համարձակ մարտիկ, ով ամենասաստիկ կռիվներին հասարակ զինվորի պես աներկյուղ մասնակցել և միշտ հաղթող է դուրս եկել: Այդ հաղթանակների լուրերն ամսագրի գնահատմամբ արագորեն տարածվել են ամենուր և «ժողովուրդը միտը դրաւ թե նաև անխոցելի է Կարիպալ-*

տին»[24]: «Մայաց աղավնին», ճիշտ ներկայացնելով Ջ. Գարիբալդու մասնակցությունը Հարավային Ամերիկայում մղված ազգային-ազատագրական պատերազմին[25], իրավացիորեն գրում է, որ նա այստեղ մարտական մկրտություն ստացավ, հանրաճանաչություն և համբավ ձեռք բերեց,իսկ նրա անունը ամենուրեք «անհաւոր եղաւ»[26]:

«Մայաց աղավնու» գնահատականը Ջ. Գարիբալդու պայքարին արդարացի և անաչառ է, քանի որ շուրջ յոթ տարի՝ Բրազիլիայի և չորս տարի՝ Ուրուգվայի անկախության համար ընթացած պատերազմներում նրա գլխավորած լեգեոնը պարտություն չկրեց: Ջ. Գարիբալդու բնութագրմամբ՝ բոլոր ճակատամարտերում իր զինվորները «կռվում էին ինչպես հին ասպետներ», հանուն ժողովրդի և ընդդեմ բռնապետության[27]: Ջ. Գարիբալդու քաջությունը, վճռականությունը և հանրաճանաչությունը նկատի ունենալով՝ Ռիո Գրանդայի նախագահ Բենտու Գոնսալեսը 1838թ. մայիսին նրան նշանակեց նավատորմի ծովակալ՝ հանրապետության ռազմա-ծովային ուժերի գլխավոր հրամանատար[28]: Այդ հատկանիշների շնորհիվ՝ Ջ. Գարիբալդու հետևից գնում էին «բոլոր գույների և ազգերի մարդիկ»[29], ովքեր զենք էին վերցրել հանուն իրենց ազատության և անկախության: «Մայաց աղավնու» բնութագրմամբ՝ «Զարմանալի ազդեցութիւն ունի Կարիպալտին նաև զօրաց վրայ իւր վիթխարի հասակովն եւ ուժովը, հերապանծ գլխովը, արիական կերպարանքովն ու նորածն հագուստովը»[30]: Ամսագիրը բացահայտ համակրանք է դրսևորում Ջ. Գարիբալդու նկատմամբ՝ չափազանցնելով նրա վիթխարի հասակը և ֆիզիկական ուժը: Նորածն հագուստ ասելով՝ «Մայաց աղավնին» նկատի ունի Ջ. Գարիբալդու կրած կարմիր վերնաշապիկը, պոնչոն և սոմբրերոն: Նրա լեգեոնականները նույնպես հագնում էին կարմիր վերնաշապիկ, որը հետագայում դարձավ իտալական ազգային-ազատագրական պայքարի մասնակիցների մարտական հագուստը և յուրահատուկ խորհրդանիշը[31]:

Ջ. Գարիբալդին, Հարավային Ամերիկայում իր լեգեոնականների հաղթանակների համբավի շնորհիվ, հայրենի Իտալիայում դարձավ հանրաճանաչ դեմք իտալական հայրենասերների շրջանում, ում բանաստեղծություններ էին ձոնում և հիմն նվիրում[32]: 1840-ական թվականների վերջին Հռոմի Պիուս IX պապի իրականացրած լիբերալ բարեփոխումներն իտալացիների շրջանում ազատագրական պայքար ծավալելու հույսեր արթնացրեցին, որի մասին լուրերը հասան նաև «Մոնթեվիդեոյի հերոս» Ջ. Գարիբալդուն: Անդրադառնալով դրան՝ «Մայաց աղավնին» գրում է, որ երբ 1848թ. իտալական «ընդհանուր ապստամբութեան ձայնը» Ամերիկա հասավ՝ Ջ. Գարիբալդին իր լեգեոնի մեծ մասի հետ շտապեց հայրենիք, որտեղ «մեծամեծ վնասներ» պատճառեց ավստրիացիներին: Պարբերականը մանրամասնություններ չի հայտնում 1848թ. իտալական ազատագրական պայքարին Ջ. Գարիբալդու մասնակցության մասին: Նա քաղաքական հայացքներով հանրապետական էր, 1844թ. Բրազիլիայում անդամագրվել էր «Առաքինության ապաստարան» («L» Asile de la Vertu»), իսկ Մոնտեվիդեոյում՝ «Հայրենիքի բարեկամներ» («Les Amis de la Patrie») մասոնական օթյակներին,[33] և ղեկավարվելով մասոնական գաղափարախոսությամբ՝ իր կյանքի գլխավոր նպատակը համարում էր ճնշվող ժողովուրդների ազատության և անկախության համար պայքարը: Մի կողմ դնելով իրեն հեռակա կարգով մահվան դատապարտած Սարդինիայի թագավոր Կառլ Ալբերտի[34] (1797-1849) հետ ունեցած գաղափարական տարաձայնությունները՝ Ջ. Գարիբալդին ընդունեց նրա գլխավորած պայքարը և կամավորագրվեց իր հայրենիքի ազատության համար պատերազմին: Արժանին հատուցելով Ջ. Գարիբալդուն՝ «Մայաց աղավնին» կարևորում է նաև նրա կնոջ մասնակցությունը պայքարին: Ամսագիրը բրազիլուհի Անիտա Ռիբեյրուին՝ նրա կնոջը, ամենահավատարիմ մարդուն և մարտական ընկերուհուն, համարում է իսկական «դիւցազնուհի», ով նրա հետ հավասար կռվեց թշնամու դեմ ու «նորա քովը գնդակահար զարնուեցաւ մեռաւ»[35]: Ջ. Գարիբալդու պայքարի մանրամասնություններին քաջատեղյակ «Մայաց աղավնին» Անիտա Ռիբեյրուի մահվան հարցում սխալ է թույլ տալիս, կամ մտածված

հերոսացնում է նրան: Իրականում Ջ. Գարիբալդու մարտական գործողությունների մշտական մասնակից, բազում զրկանքներ կրած Անիտան մահացավ մալարիայից 1849թ. օգոստոսի 4-ին, ամուսնու գրկում, Ռավեննայի մոտակայքում՝ Սան Մարինոյի ճանապարհին [36]:

1848 թ. Իտալական ազատագրական պատերազմում «Մայաց աղավնին» կարևորում է Ջ. Գարիբալդու դերը, հատկապես՝ 1849թ. ապրիլ-հուլիսին Հռոմի պաշտպանության համար մղված մարտերում: Ամսագիրը նրան համարում է այդ «դիմակայութեան ոգին ու գործիքը», ով իր քաջությամբ զարմացրեց անգամ ֆրանսիացի զորավարներին: Զինվորական կրթություն չունեցող Ջ. Գարիբալդու կամավորականները Հռոմի պաշտպանության օրերին լուրջ դիմադրություն ցույց տվեցին ֆրանսիական «կրթված ու պատերազմափորձ զօրաց»[37]: Նա Հռոմի պաշարման ժամանակ հանրապետության ղեկավարներին խորհուրդ էր տալիս մինչև վերջ կռվել, քաղաքը պաշտպանել և ֆրանսիացիներին անձնատուր չլինել: Բայց երբ տեսավ, որ հանրապետության «իշխանակայացը միտքը հակառակն է», իր փոքրիկ գնդով Հռոմը լքեց, «թշնամեաց մէջէն անցաւ» ու քաշվեց Սան-Մարինո[38]: Իրականում 1849թ. հուլիսի 1-ին նա Սահմանադիր ժողովում Հռոմի հանրապետության ղեկավարներին հայտարարեց, որ «քաղաքը հնարավոր է պաշտպանել ընդամենը մի քանի օր, այն էլ քաղաքի կեսը լրիվ ավերելու պայմաններում»[39]: Հուլիսի 3-ին Հռոմի անկումից հետո Ջ. Գարիբալդին չորս հազար կամավորներով շարժվեց օգնության Վենետիկի հանրապետությանը: Հուլիսի 31-ին Սան Մարինոյում նա իր ջոկատն ազատ արձակեց՝ չունենալով արշավանքը շարունակելու հնարավորություն: «Մայաց աղավնու» պատմելով նրա երկու հարյուր կամավորները չցանկացան իրենից բաժանվել, որոնց հետ Ջենովա գնաց, մի քանի ամիս մնաց, վերքերը բուժեց և դարձյալ մեկնեց Ամերիկա: Մի փոքր գումար վաստակելով՝ կրկին վերադարձավ հայրենիք, որտեղ Կապրերա կղզում իր զավակների հետ զբաղվում էր երկրագործությամբ[40]:

1848թ. ազատագրական պայքարի պարտությունից հետո Ջ. Գարիբալդին անդամագրվեց Ջուզեպպե Մացցինիի (1805-1872) կողմից 1853թ. գարնանը հիմնած «Գործողությունների կուսակցությանը», իսկ 1857թ. օգոստոսին՝ Լոնդոնում իտալական հայրենասիրական շարժման գործիչներից Դանիլե Մանինի (1804-1857) հիմնած «Իտալական ազգային ընկերությանը»: Հայրենի Իտալիայի միավորումը Պիեմոնտի թագավորի օգնությամբ իրականացնելու կարգախոսով հանդես եկող այս ընկերության հետ Ջ. Գարիբալդին համագործակցեց երկու տարի[41]:

1859թ. Պիեմոնտի թագավորությունը, ունենալով Ֆրանսիայի աջակցությունը, Ավստրիայի դեմ ազատագրական նոր պատերազմ սկսեց: Արձագանքելով դրան՝ «Մայաց աղավնին» գրում է. «երբ որ նորէն սկսաւ Իտալիոյ անկախութեան համար պատերազմը… Կարիպալտին խոփն ու մաճը թողուց, թուրը ձեռք առաւ ու վազեց իւր հայրենեացն ազատութեանը օգնական լինել, եւ նորանոր յաղթութիւններով պատերազմական ու հայրենասիրական փառքն աւելցուց »[42]:

Գ. վրդ. Այվազովսկին հավատարիմ մնալով ավստրիական տիրապետության դեմ իտալական ժողովրդի պայքարի վերաբերյալ որդեգրած ուղեգծին՝ հերթական անգամ փաստում է այն իրողությունը, որ իտալացիների այս պայքարը նույնպես անկախության համար պատերազմ է: Նա մեկ անգամ ևս ընդգծում է Ջ. Գարիբալդու հայրենասիրությունը, ով երկրագործի խաղաղ կյանքը թողել և զենք է վերցրել հանուն հայրենիքի անկախության: «Մայաց աղավնու» հետագա հրապարակումներում Գ. վրդ. Այվազովսկին բավական հավաստի տվյալներով ներկայացնում է պատերազմի ընթացքը, որի հիմքում, ըստ նրա, ընկած է իտալացիների «ազգասիրական հոգին», ովքեր իրենց «ազատութեանը սրտանց կփափաքին… և կուզեն օտարի լուծէն ազատուին»[43]:

«Մայրաց աղավնին» իտալացիների անկախության համար պատերազմը լուսաբանում է եվրոպական և հատկապես, իտալական մամուլի հրապարակումների ու ստացված լուրերի հիման վրա, բայց հիմնականում իր աղբյուրները չի հիշատակում: Պարբերականի հրապարակումներից նկատելի է, որ ստացված լուրերը Գ. վրդ. Այվազովսկին վերլուծում, համադրում և ընթերցողներին է ներկայացնում իր ընկալման տեսանկյունից: Այդպիսի հրապարակումները շատ են, որոնցում առկա են ստեղծված իրադրության վերաբերյալ սթափ գնահատականներ ու մեկնաբանություններ: Որոշ հրապարակումներում Գ. վրդ. Ակվազովսկին իտալական պատերազմի հնարավոր վախճանի ու հետևանքների, ինչպես նաև դրանում Ջ. Գարիբալդու դերակատարման մասին կանխատեսումներ է անում, որոնք հետագայում իրողություն դարձան: «Մայրաց աղավնին» ներկայացնում է պատերազմում իտալացիների տարած բոլոր փառավոր հաղթանակները, որոնց «տեղերուն անունները անմահացուցին պատմութեան մէջ»[44]: Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ի կողմից պատերազմն անսպասելի դադարեցնելու, Ավստրիայի հետ 1859թ. հուլիսի 11-ին Վիլլաֆրանկայում՝ զինադադար, իսկ օգոստոսի 11-ին Ցյուրիխում՝ հաշտություն կնքելու[45] կապակցությամբ «Մայրաց աղավնին» ափսոսանք է հայտնում, որ «այնչափ փառաւորութեամբ սկսված իտալական պատերազմը «անակնկալ կերպով մը վերջացաւ՝ առանց Իտալիոյ ազատութեան խնդիրը որոշելու»[46]:

Ամսագիրն իրավացիորեն նկատում է, որ հաշտության իրողության հետ հաշտվեցին շատերը, բայց ոչ Ջ. Գարիբալդին: 1859թ. հոկտեմբերին նա «Միլիոն հրացան» ձեռք բերելու համար հանգանակության կոչ արեց, իսկ նոյեմբերին «Զինված ազգ» («La Nazione Armato») արմատական հայացքներ կրող ընկերություն ստեղծեց, որը թագավորի պահանջով հարկադրված եղավ փակել[47]: Չհաշտվելով ստեղծված վիճակի հետ՝ Ջ. Գարիբալդին հայրենիքն օտարի տիրապետությունից ամբողջովին ազատագրելու և միավորելու նպատակով 1860թ. մայիսին Սիցիլական արշավանք սկսեց: Դրան քաջատեղյակ ամսագիրը Ջ. Գարիբալդու «հազարյակի» արշավանքի պատճառով «Իտալիան կրկին ալեկոծութեան մէջ է» համարում, քանզի պայքարը գնալով նոր թափ է ստանում: Ելնելով դրանից՝ ամսագիրը 1860թ. մայիսի 11-ին Ջ. Գարիբալդու՝ Սիցիլիա ոտք դնելը համարում է «Եվրոպայի նշանաւոր քաղաքական դիպուածների կարգը անցնելը»[48], քանի որ այն խանգարել է Եվրոպայի անդորրը: Ճիշտ նկատելով, որ Ջ. Գարիբալդու արշավանքն անսպասելի էր Պիեմոնտի թագավորի համար և անհանգստացրել է եվրոպական մի շարք պետությունների[49], «Մայրաց աղավնին» գտնում է, որ, դրան հակառակ, ոգևորություն է առաջացրել իտալացիների շրջանում: Իտալացիների պայքարի ոգեշնչողը պարբերականը համարում է հայրենիքի նվիրյալ Ջ. Գարիբալդուն, որի շուրջը համախմբվում են իր հայրենակիցները: «Կարիպալտի զօրավարը»,-գրում է ամսագիրը,- Իտալիոյ ազատութեան սիրովը վառուած, 1848-են ի վեր անդադար եղած է, որ իւր նպատակին հասնի»[50]: Իտալական ազատագրական պայքարի պատմությանը քաջատեղյակ «Մայրաց աղավնու» խմբագիր Գ. Վրդ. Այվազովսկին նշում է, որ, ի տարբերություն 1848թ. պայքարի, այս անգամ Ջ. Գարիբալդին հորդորում է իր հայրենակիցներին համախմբվել Պիեմոնտի թագավոր Վիտորիո Էմմանուելի շուրջը: Ամսագիրը մեջբերում է իտալացիներին հղած Ջ. Գարիբալդու կոչից մի հատված, որտեղ նա հորդորում էր իր հայրենակիցներին փողով, զենքով և իրենց բազկի ուժով աջակցել թագավորին Իտալիայի թշնամիների դեմ պայքարում:

Պատերազմի ընթացքն իտալական լրատվամիջոցներով լուսաբանող «Մայրաց աղավնին» գրում է, որ Իտալիայի ազատության համար անդադար կռվող Ջ. Գարիբալդին հանդես է գալիս «Իտալիա և Վիտորիո Էմմանուել» կարգախոսով: Ճիշտ ընկալելով Ջ. Գարիբալդու պայքարի մարտավարության փոփոխությունը և նոր կարգախոսով արշավանք սկսելը [51] ՝ «Մայրաց աղավնին» նկատում է, որ նրա կոչը խան-

դավաճել է իտալական բոլոր հայրենասերներին, ովքեր մի կողմ են դրել իրենց տարաձայնությունները և համախմբել են այդ կարգախոսի շուրջը: Անգամ հանրապետականների պարագլուխ Ջ. Մացցինին, որ «բոլոր Իտալիան մէկ հասարակապետութիւն մը դարձնելու կաշխատեր, այժմ զամենքը կոչորդորէ ոտք ելլելու Փիեմունթին հետ միանալու մտքով»[52]:

Ամսագիրն իրավացի է, քանզի «Իտալիա և Վիտորիո Էմմանուել» կարգախոսը բխում էր Ջ. Մացցինիի «Գործողության կուսակցության» քաղաքականությունից, որը ձգտում էր այն կյանքի կոչել իտալական երկրորդ պատերազմի տարիներին[53]: Չանդրադառնալով Ջ. Գարիբալդու «հազարյակի» արշավանքի մանրամասնություններին և նրա տարած հաղթանակներին, ով Սիցիլիան ազատագրում էր Պիեմոնտի թագավորի անունից[54]՝ «Մասյաց աղավնին» գրում է. «Բոլոր Իտալիան անպատմելի ցնծութեան ու շարժման մէջ է Կարիպալտիին անեցած յաջողութեան վրա», անգամ Նեապոլի բնակիչները «գրկաբաց կսպասեն նորա գալուն»[55]: Իտալիան, իսկապես, ցնծում էր Ջ. Գարիբալդու հաջողություններից, ում «հազարյակը» իրեն կամավոր միացած «պիչչոտտի» ջոկատների աջակցությամբ 1860թ. մայիսի վերջին գրեթե ամբողջությամբ ատելի Բուրբոնների տիրապետությունից ազատագրեց Սիցիլիան: Իրեն հռչակելով Սիցիլիայի բռնապետ՝ Ջ. Գարիբալդին սոցիալական և քաղաքական մի շարք միջոցառումներ իրականացրեց, որոնք էլ ավելի բարձրացրին նրա հեղինակությունը և անհանգստացրին Պիեմոնտի թագավորին ու վարչապետին[56]: «Մասյաց աղավնին» հերքում է եվրոպական մամուլում շրջանառվող լուրերն այն մասին, որ Ջ. Գարիբալդու «անակնկալ հաջողությունը» պայմանավորված է Պիեմոնտի ցուցաբերած օգնության հետ: Ամսագիրը վկայակոչում է Պիեմոնտի վարչապետ Կ. Կավուրի պաշտոնական հայտարարությունը, ըստ որի՝ Ֆրանսիան և Պիեմոնտը հավանություն չեն տալիս Ջ. Գարիբալդու գործողություններին, «բայց անոր արգելք ընել ալ չկրնար»[57]: Ստացված լուրերի և հրապարակումների վերլուծությունից ամսագիրը հանգում է այն եզրակացության, որ եվրոպական պետություններից Ջ. Գարիբալդուն ամենից շատ աջակցում է Անգլիան, որտեղ Ջ. Գարիբալդու համար գումար են հավաքում, մտադիր են անգամ օգնական զորք ուղարկել, իսկ կառավարությունը դրան արգելք չի հանդիսանում:

Ճիշտ ընկալելով անգլիական իշխանությունների և հասարակության դիրքորոշումը Ջ. Գարիբալդու պայքարի նկատմամբ[58]՝ «Մասյաց աղավնին» բավական իրատեսական դիտարկում է անում: Ամսագրի կարծիքով անգլիացիները թեպետ ամեն կերպ Ջ. Գարիբալդուն իրենց օգնությունն են առաջարկում, բայց «առանց իրենց շահը մտածելու չեն աշխատիր այս բանիս մէջ»[59]: «Մասյաց աղավնու» դիտարկմամբ՝ իտալական պատերազմի հաջողությունը և դրա հետևանքով Եվրոպայում ստեղծված քաղաքական իրադրության հանգուցալուծումը «Կարիպալտին քաջութեանցը վրայ է»[60]: Դրա առհավատչյան ամսագիրը համարում է այն, որ նա գրավել է ամբողջ Սիցիլիան, հավաքել է 50 հազարից ավելի զորք, ունի մի քանի ռազմանավ և բավական շատ գումար, որը նրան ուղարկում են Իտալիայի բոլոր կողմերից և եվրոպական շատ երկրներից: «Մասյաց աղավնու» կարծիքով Սիցիլիան ազատագրելուց հետո Ջ. Գարիբալդին մտադիր է արշավանք իրականացնել Նեապոլի վրա, որին դեմ են Պիեմոնտի թագավորն ու Կ. Կավուրը: Չնայած դրան, գրում է ամսագիրը, Ջ. Գարիբալդին իտալացիների ազատություն ձեռք բերելու հույսը «ամենայն յաջողութեամբ և փառաւորութեամբ կատարելու հետ է»[61]: «Մասյաց աղավնին» Ճիշտ էր տեղեկացված, որ Վիկտոր Էմմանուել II-ը, «հանուն Իտալիայի շահի», Ջ. Գարիբալդուն հորդորում է հրաժարվել Նեապոլի վրա արշավելու մտադրությունից, բայց «քաջն Կարիպալտին դժուարացաւ այս առաջարկութիւնն ընդունելու»[62]: Չանսալով թագավորի կամքին՝ Ջ. Գարիբալդին նրան հղած նամակում Նեապոլն ազատագրելու մտադրությունը հիմնավորում էր այսպես. «Եթե ես հիմա, իտալական ժողովրդի կամքին հակառակ, տատանվեմ և հա-

*պաղեմ, ապա կդավաճանեմ իմ պարտքին և կվնասեմ Իտալիայի ազատագրման սուրբ գործին: Ուստի թույլ տվեք այս անգամ ձեզ չհպատակվել»[63]:*

*«Մայաց աղավնին» գրում է, որ, երբ Ջ. Գարիբալդին իր կարմիրշապիկավորներով շարժվեց դեպի Նեապոլ, Ֆրանցիսկ II թագավորը, մայրաքաղաքը կորցնելու վտանգից խուսափելու համար, «զանազան ազատություններ» խոստացավ իր հպատակներին: Ըստ պարբերականի՝ նեապոլցիները հավատացած են, որ թագավորի խոստացած ազատությունները «իրեն արդարութիւնը կամ ազատասիրութիւնը չէ, այլ Կարիպալտին վախն է»[64]: Ամսագիրը Ջ. Գարիբալդուց ունեցած վախով է բացատրում այն իրողությունը, որ Նեապոլի թագավոր Ֆրանցիսկ II մայրաքաղաքը լքել ու «հուսահատաբար» փախել է Գաետա՝ «տկարութիւնը ազատական զօրաւարին քաջութեանը հետ չափելով»[65]:*

*«Մայաց աղավնին» թագավորի «տկարությանը» հակադրում է «քաջն Կարիպալտիի» օրեցօր հզորանալը, միմյանց հետևից հաղթանակներ տանելը և սեպտեմբերի 7-ին «փառաւորապէս Նափոլի քաղաք մտնելը»: Ամսագրի պատմելով՝ նեապոլցիները Ջ. Գարիբալդու հաջողության պատվին մի քանի օր շարունակ այնպիսի ցնծություններ և տոնախմբություններ արեցին, որոնց նմանը քաղաքը երբևէ չէր տեսել Բուրբոնների թագավորության ամբողջ ժամանակաշրջանում: Ամսագիրն իրավացի է՝ Ջ. Գարիբալդին Նեապոլ մտավ իսկական հաղթողի պես, բաց կառքում փառահեղ նստած, հագած կարմիր վերնաշապիկ և սպիտակ թիկնոց և ընդամենը մի քանի համհարզների ուղեկցությամբ: Իր մուտքը Նեապոլ նա հետագայում իր հուշերում անվանում էր «ավելի շուտ հրաշք, քան իրականություն», քանզի անցավ քաղաքում գտնվող թագավորական ջոկատների միջով, որի զինվորները զենքը ցած դրեցին ու իրեն պատիվ առան[66]: Ջ. Գարիբալդու այս հաջողությունից հետո «Մայաց աղավնու» դիտարկմամբ ոչ միայն նեապոլցիները, այլև բոլոր իտալացիները իրենց «աչքը և յոյսը դարձուցած են իրենց հրաշալի ազատարարի՝ այսինքն Կարիպալտիի վրայ»[67]:*

*«Մայաց աղավնին» Ջ. Գարիբալդուն անվանում է Իտալիայի ազատարար, քանզի նա, կարճ ժամանակում մեծ դժվարություններ հաղթահարելով, ազատագրել է Սիցիլիան և Նեապոլը ու պատրաստվում է իրականացնել իր վաղեմի երազանքը՝ միավորել Իտալիան: Իր հայրենակիցներին ուղղված կոչում նա հաղթանակը լիարժեք չէր համարում, քանի դեռ ազատագրված չեն Հռոմն ու Վենետիկը: Ելնելով այդ նպատակադրությունից՝ Ջ. Գարիբալդին իտալացիներին հավաստիացնում էր. «Դա մեր պարտքն է և մեր իրավունքը: Ուրեմն, ի զեն»[68]: Պարբերականի համոզմամբ իտալացիներն իրենց պայքարի հաջողությունը կապում են Ջ. Գարիբալդու հաղթանակների հետ: Այս համոզմունքը բխում էր 1860թ. հոկտեմբերի 1-2-ին Վոլտուրնո գետի մոտ Նեապոլիտանական թագավորության 50 հազար զորքի դեմ Ջ. Գարիբալդու 20 հազար երիտասարդ կարմիրշապիկավորների տարած փայլուն հաղթանակից: Դրանով Ջ. Գարիբալդին Բուրբոնների տիրապետությունից ազատագրեց Նեապոլիտական թագավորությունը: Նեապոլում ստեղծվեց չափավոր լիբերեալներից ու դեմոկրատներից կազմված կառավարություն, իսկ Ջ. Գարիբալդին հռչակվեց «Երկու Սիցիլիաների բռնապետ»: Կառավարության որոշմամբ հոկտեմբերի 21-ին անցկացված հանրաքվեն հաստատեց Սիցիլիայի և Նեապոլի միավորումը Պիեմոնտի թագավորությանը[69]: «Մայաց աղավնին» դա համարում է Ջ. Գարիբալդու հերթական քայլը Իտալիայի միավորման ճանապարհին, որը իտալացիների բաղձանքն է: «Ամէն Իտալացի,-գրում է պարբերականը,-միտքը դրած էր և դրած է, որ Կարիպալտիին յաղթական ընթացքը այն ժամանակը միայն պիտի վերջանայ՝ երբոր Հռոմն ալ առնու, երբոր Վենետիկոյ ալ տիրէ և այսքան ժամանակէ ի վեր փափաքելի եղած Իտալիոյ միութիւնն ու կատարեալ ազատութիւնը վերջապես տեսնուի»[70]: Ջ. Գարիբալդու պայքարի վերջնական նպատակն իրավացիորեն համարելով Իտալիայի միավորումը՝ ամսագիրը միաժամանակ ընդգծում է, որ այս հարցում նա իտալացիներին հուսախաբ չի անում: «Մինչեւ*

*այս օրուան օրս Կարիպալտին ալ,-գրում է պարբերականը,-Իտալացւոց այս յոյսը ամենայն յաջողութեամբ և փառաւորութեամբ կատարելու հետ է»[71]:*

*«Մասյաց աղավնու» հավատը Ջ. Գարիբալդու անձի, նրա խոսքերի ու գործերի ներդաշնակության և համապատասխանության վերաբերյալ հիմնված էր կոնկրետ փաստի վրա: Բանն այն է, որ չսպասելով հանրաքվեի արդյունքին՝ Ջ. Գարբալդին հոկտեմբերի 15-ին արձակած դեկրետում հայտարարում էր՝ որպեսզի Երկու Սիցիլիաները մտնեն միասնական և անբաժան Իտալիայի կազմի մեջ, ինքը պարտավորվում է Նեապոլ ժամանելուն պես Պիեմոնտի թագավորին փոխանցել ժողովրդի կողմից իրեն վստահված բռնապետի լիազորությունները[72]:*

*Իտալիայի միավորման նպատակն իրականություն դարձնելու համար Ջ. Գարիբալդու վճռականությունը, հաստատակամությունը և մինչև հաղթական ավարտ պայքարելու կամքը հավաստող «Մասյաց աղավնին» գրում է, որ Ջ. Գարիբալդին հայտարարել է. «Իտալիոյ ապագայ վիճակը Կապիտոլիումի բլրին վրայ (այսինքն՝ Հռոմի մեջ) պիտի որոշուի»[73]: Ջ. Գարիբալդու այս հայտարարությունից «Մասյաց աղավնու» խմբագիր Գ. վրդ. Այվազովսկին համոզված էր, որ Ջ. Գարիբալդին Նեապոլի ազատագրումից հետո «իւր յաղթական արշաւանքը դէպի Հռոմ շտկած է»[74]: Բայց դեպի Հռոմ արշավանք իրականացնելու հարցում Ջ. Գարիբալդին և Պիեմոնտի թագավորը տարաձայնություններ ունեին, որը շուտով հասկանում է նաև Գ. վրդ. Այվազովսկին: Նա կռահում է, որ Ջ. Գարիբալդին մտադիր է Իտալիան ազատագրել առանց Ֆրանսիայի օգնության և «ետքը յանձնել Սարտենիոյ թագաւորին բոլոր Իտալիոյ թագաւորութեանը», իսկ Վիտորիո Էմմանուել II-րդ «կփութար օր մը առաջ իւր ձեռքն առնելու Կարիպալտիին սկսած արշավանքին պտուղները, Գաղդիոյ օգնությամբ, հաւանութեամբն ու պաշտպանութեամբը[75]:*

*1860թ. հոկտեմբերի 26-ին Կապանելլիում Վիտորիո Էմմանուել II-ը Ջ. Գարիբալդուն հրահանգեց դադարեցնել պատերազմական գործողությունները, մնալ իր բանակի պահեստազորում և հնարավորություն տալ իրեն ավարտին հասցնել հաղթանակն ու անձամբ իրականացնել Իտալիայի միավորումը[76]: Ջ. Գարիբալդու զիջելը և մի կողմ քաշվելը «Մասյաց աղավնին» թյուրիմացաբար վերագրում է թագավորի հետ նրա տարաձայնությունների հարթմանը, քանզի միավորվելով գարիբալդիականների հետ՝ Պիեմոնտի թագավորը «Իտալական հեղափոխութեան ամէն գլխաւոր թելերը ձեռք առաւ[77]: Դրա վկայությունն ամսագիրը համարում է այն, որ 1860թ. նոյեմբերի 7-ին Վիտորիո Էմմանուել II-ը իր զորքով մտել է Նեապոլ, իսկ Ջ. Գարիբալդին քաշվել է Կապրերա կղզի: Մինչդեռ իրականում Վիտորիո Էմմանուել II-ը նրանից հաղթանակի դափնիները վերցրեց և մեկուսացրեց պատերազմական ու քաղաքական գործունեությունից: Թագավորն անգամ չցանկացավ, որ Ջ. Գարիբալդին Նեապոլում մնա իր իշխանության տեղապահ[78]: Վիտորիո Էմմանուել II-ը այդպես վարձահատույց եղավ Ջ. Գարիբալդուն, ով «մի բուռ մարդկանցով հաղթեց բանակի, ազատագրեց մի ամբողջ երկիր և ազատ արձակվեց նրանից, ինչպես ազատ են արձակում կառապանին, երբ նա տեղ է հասցնում»[79]:*

*«Մասյաց աղավնին» Ջ. Գարիբալդուն բնութագրում է որպես հայրենասեր և նպատակասլաց զինվորական, ով երբեք չի նահանջելու իր բռնած ճանապարհից: Ամսագիրը՝ որպես դրա հավաստիացում, վկայակոչում է Կապրերա մեկնելու առաջ, իր կամավորներին ուղղված նրա հրաժեշտի խոսքերը. «Շուտով նորէն կտեսնուիմք ու կերթամք ազատելու մեր այն եղբայրները, որ օտար ազգաց լուծին տակը կչարչարուին»[80]: Ամսագիրը նկատի ունի նոյեմբերի 9-ին Կապրերա մեկնած Ջ.Գարիբալդու նամակն իր կամավորներին, որտեղ խոստանում էր լինել Իտալիայի ազատության համար պայքարող զինվորների կողքին, ճակատամարտի օրը լինել նրանց հետ, միասին ազատագրել իրենց եղբայրներին և հաջորդ տարվա գարնանը հանդիպել Հռոմում[81]:*

Վիտորիո Էմմանուել II-ի վերաբերմունքից դառնացած ու վիրավորված Ջ. Գարիբալդին իր «Հուշերում» գրում է, որ Կապրերայում «ձգտում էր վերադառնալ իր մեկուսացված կյանքին»[82]: Բայց Ջ. Գարիբալդին մեկուսացված չմնաց, Կապրերա կղզին դարձավ յուրատեսակ «Մեքքա» եվրոպական շատ ժողովուրդների դեմոկրատական և հեղափոխական տրամադրություններ ունեցող վտարանդիների համար: Այս ամենին քաջատեղյակ «Մայաց աղավնին» իր ընթերցողներին հավաստիացնում է, որ Ջ. Գարիբալդին «պարապ կեցած չէ Քափրէրա կղզին»: Նա պարբերաբար ընդունում է իտալացի և հունգար հին ու նոր զորավարներին, ովքեր «անդադար կերթան անոր խորհուրդները հարցնելու»[83]:

Շարունակելով զարգացնել Ջ.Գարիբալդու մեծ հայրենասեր լինելու թեման՝ «Մայաց աղավնին» իր միտքը հիմնավորող մեկ այլ փաստ է վկայակոչում՝ մեջ բերելով նրա հայտարարությունից մի հատված: Ըստ ամսագրի՝ 1860թ. նոյեմբերի 5-ին Կապրերայում Ջ. Գարիբալդին իր հայրենակիցներին հորդորել է համախմբվել Վիտորիո Էմմանուել II թագավորի շուրջը, քանի որ նա «ամենահարկաւոր է Իտալիոյ համար, ով որ Իտալիոյ միութիւնը կուզէ՝ պէտք է նորա ետևէն երթայ»[84]: Ընդսմին, Ջ.-Գարիբալդին չէր կարևորում, թե Իտալիայի միավորման դեպքում ո՞վ կլինի վարչապետը՝ կոմս Կավուրը, թե՞ Կատտանեոն, ով «անուանի ազգասէր Իտալացի մի է»: Ջ. Գարիբալդին ի սրտե փափագում էր, որ իտալացիները թագավորից պահանջեն մինչև 1861թ. մարտը հավաքել 500 հազար զորք և գլխավորել հայրենիքի միավորման համար պայքարը: Պարբերականն իրավացի է, Ջ. Գարիբալդին, իրոք, այդպիսի խնդիր դնում էր թագավորի առաջ: Նա ասում էր, որ եթե «մեկ միլիոն զինված իտալացի չհավաքվի, ապա վայ մեր ազատությանը»[85]:

Ջ. Գարիբալդու հայտարարությունը «Մայաց աղավնին» ընդունում է որպես թագավորի հետ տարաձայնությունների հաղթահարման նշան: Միաժամանակ դրանով ամսագիրը մեկ անգամ ևս ընդգծում է նրա մեծահոգությունն ու ներողամտությունը, ով պատրաստ է հանուն հայրենիքի ազատության և միավորման հրաժարվել իր սկզբունքներից: «Մայաց աղավնին» Ջ. Գարիբալդու հայտարարությունից եզրակացնում է, որ նա և Վիտորիո Էմմանուելը «միտք չունին իրենց զէնքը վար դնելու՝ մինչեւ որ Հռովմայ ու Վենետիկոյ խնդիրները չլուծուին չվերջանան»[86]: Պարբերականն իրավացիորեն Իտալիայի միավորումը համարում է բոլոր իտալացիների «մեծ նպատակը»[87], որին անկեղծորեն ձգտում են Պիեմոնտի թագավորը, վարչապետը և Ջ.Գարիբալդին: Գ. վրդ. Այվազովսկին լավ էր հասկանում, որ նրանց նպատակը նույնն է, բայց տարբեր են դրան հասնելու երեք հայրենասեր մարդկանց պատկերացումներն ու բռնած ճանապարհը:

Միապետական կարգերի կողմնակից «Մայաց աղավնու» խմբագիրը, սկզբունքորեն դեմ լինելով հեղափոխություններին, առանձնահատուկ դիրքորոշում է դրսևորում իտալական իրադարձությունների դեպքում: Իտալացիների պայքարի նկատմամբ հետաքրքրությունը երբեք չթուլացրած Գ. վրդ. Այվազովսկին ի սկզբանե Իտալիայում տեղի ունեցող իրադարձությունները գնահատում է պատերազմ, անկախության և ազատության համար պայքար, որի «մեծ նպատակը» իրավացիորեն համարում է Իտալիայի միավորումը: Սակայն 1861թ. փետրվարին նա իտալական իրադարձությունները համարում է «հեղափոխություն» և կարծիք հայտնում, որ այդ «յեղափոխութենէն մեծամեծ աղեկութիւններ կսպասուին Իտալիոյ ազգին համար»[88]:

Միաժամանակ Գ. վրդ. Այվազովսկին գտնում է, որ «Իտալիոյ ազգային գործը» չի կարող հաջողութիւն ունենալ առանց մեծ դժվարություններ հաղթահարելու և զանազան փորձություններ անցնելու: Այդ դժվարություններից մեկը ամսագիրը համարում է Կ.Կավուրի և Ջ.Գարիբալդու միջև Իտալիայի միավորման հարցում առկա տարաձայնությունները: Ամսագրի պատմելով՝ դրանք հաղթահարելու համար Կ.Կավուրը Կապրերա կղզի է ուղարկել հունգարացի սպա Իշտվան Թյուռին (1825-1908), ով Սիցիլիա-

*կան արշավանքի մասնակից էր և Ջ. Գարիբալդու նշանակմամբ ղեկավարում էր Հարավային բանակի դիվիզիաներից մեկը: Ի. Թյուռը պետք է Ջ.Գարիբալդուն համոզեր առայժմ հրաժարվել Վենետիկի և Հռոմի վրա արշավելու գաղափարից, քանի դեռ Իտալիան ամբողջովին ազատագրված չէ: Դատելով այդ մասին եվրոպական մամուլի հրապարակումներից՝ «Մայյաց աղավնին» գտնում է, որ Ջ.Գարիբալդին, ամենայն հավանականությամբ, կընդունի այդ առաջարկությունը, քանի որ «պատրաստ է Քավուր կոմսին քաղաքականութեանը ճամբան բռնելու»[89]:*

*Ամսագրի լավատեսությունը պայմանավորված էր 1861թ. մարտին տեղի ունեցած երկու իրադարձության հետ, որոնք Ջ.Գարիբալդուն կարող էին դրդել ժամանակավորապես հրաժարվել արշավանքի մտադրությունից: Դրանցից մեկը 1861թ. մարտի 17-ին Իտալիայի խորհրդարանում Վիտորիո Էմմանուել II-ին Իտալիայի թագավոր ընտրելն էր, որն ամսագրի գնահատմամբ «տարվա անմոռանալի անցքերէն մէկն եղաւ»[90]: Իտալացիների համար բախտորոշ այդ իրադարձությունը «Մայյաց աղավնին» համարում է իտալական ազատագրական պատերազմի «ամենուն յայտնի գեղեցիկ պտուղը…, Իտալիոյ զօրանալը և միանալը ընդ գաւազանաւ հայրենասէր թագաւորին»[91]: Երկրորդ իրադարձությունը 1861թ. մարտի 27-ին իտալական խորհրդարանում Կ.Կավուրի հայտարարությունն էր՝ «Կերթամք մեք Հռոմ, անտարակոյս, բայց Գաղղիոյ հաւանութիւնն ընդունելէն ետև…»[92]: «Մայյաց աղավնին» բառացի մեջբերում է Կ.Կավուրի խոսքը, ով, փաստելով կառավարության իրական նպատակը, խորհրդարանին դրդում էր Հռոմը հայտարարել Իտալիայի մայրաքաղաք[93]:*

*Իտալիայի միավորման աննկուն ջատագով Ջ. Գարիբալդին, անշուշտ, բավարարված էր Իտալական թագավորության հռչակումով և Հռոմը պետության մայրաքաղաք հայտարարելու Կ.Կավուրի դիրքորոշումով: Բայց Ջ.Գարիբալդին գտնում էր, որ Հռոմը պետք է ազատագրել իտալական հայրենասերների ուժերով և պայքարի ճանապարհով: Մինչդեռ թագավորն ու Կ.Կավուրը հույս ունեին Հռոմը ձեռք բերել Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ի օգնությամբ, կամ էլ Պիուս IX պապի՝ աշխարհիկ իշխանությունից կամավոր հրաժարվելու ճանապարհով, որից հետո Հռոմը կհռչակվեր Իտալիայի մայրաքաղաք[94]: Ամսագրի դիտարկմամբ՝ իտալացիները Կ.Կավուրի հայտարարությունից ոգևորվել են և «պատրաստ են իրենց դիւցազնին» (Գարիբալդուն – Ֆ.Մ.) մէկ խոսքովը նորա ետեւէն ամէն տեղ երթալու, բայց կերևևայ թե Փիեմոնթի կառավարությունը կարծիք կընէ որ դեռ պատերազմ սկսելու ժամանակը չէ»[95]: Այդ մտադրության իրականացմանը մասամբ խանգարեց 1861թ. հունիսի 6-ին Կ.Կավուրի անժամանակ մահը և Պիուս IX պապի՝ Հռոմը ոչ մի գնով չզիջելու կոշտ դիրքորոշումը[96]:*

*«Մայյաց աղավնին», վերլուծելով Իտալիայում ստեղծված իրադրությունը, ճիշտ է ընկալում, որ Կ.Կավուրի մահը և Հռոմը չզիջելու՝ Պիուս IX պապի համառությունը ոչնչով չեն խանգարում Ջ. Գարիբալդուն հայրենակիցների շրջանում հետևողականորեն առաջ տանել Հռոմն ու Վենետիկը Իտալիային միավորելու գաղափարը: Դրան հասնելու համար նա Թուրինի խորհրդարանում 1861 թ. ապրիլի 13-ին առաջարկեց ստեղծել արագ արձագանքման ազգային գվարդիա, բայց մերժում ստացավ[97]: «Մայյաց աղավնու» դիտարկմամբ Ջ. Գարիբալդին տեսնելով, որ խորհրդարանում իր պատերազմական հորդորները ընդունելի չեղան, քաշվեց Կապրերա՝ «սպասելով որ Իտալիան իրեն օգնութեան կարօտութիւն ցուցընէ»[98]:*

*Հետևողականորեն շարունակելով ընդգծել Ջ.Գարիբալդու դերը Իտալիայի միավորման համար պայքարում՝ ամսագիրն առաջ է քաշում այն միտքը, որ, ի տարբերություն Պիեմոնտի թագավորության անբարյացկամ վերաբերմունքի, հասարակ ժողովուրդը գնահատում է նրան: Դրա վկայությունը պարբերականը համարում է այն, որ 1861թ. սեպտեմբերի 15-ին Նեապոլում հանդիսավորությամբ նշել են «Կարիպալտիին այն քաղաքը մտնելու տարեդարձի յիշատակը»[99]: Ջ. Գարիբալդին առաջարկել է հրա-*

*վիրել «ահագին եւ համաշխարհային զօրաժողով» և ծովից ու ցամաքից Իտալիային «կատարեալ ազատութիւն տալ»[100], որի լուծումը կարող է տեղի ունենալ 1862 թվականին: Ամսագրի այս կանխատեսումը չիրականացավ, իսկ իտալացիները չդադարեցին պահանջել Հռոմը դարձնել Իտալական թագավորության մայրաքաղաքը:*

*«Մասյաց աղավնին» Իտալիայի միավորման խնդիրը համարում է գարիբալդիականների և «գրեթե բոլոր Իտալացւոց բաղձանացը»[101], որի լուծումը կապում է Կապրերայում գտնվող Ջ. Գարիբալդու հետ: Ամսագրի համոզմամբ՝ այստեղից են իտալացիները սպասում իրենց «կատարեալ ազատութիւնը՝ Կարիպալտիին ձեռքովը»[102]: «Մասյաց աղավնու» կանխատեսումն իրականություն դարձավ 1862թ. հուլիսին, երբ Ջ.Գարիբալդին մի խումբ զինակիցների հետ լքեց Կապրերան և նավարկեց դեպի Պալերմո: Նպատակ ունենալով Սիցիլիայից արշավել Հռոմի վրա՝ նա Մարսալում իտալացիներին կոչ արեց այս անգամ պայքարի ելնել «Հռոմ կամ մահ» կարգախոսով[103]: «Մասյաց աղավնին» ամբողջությամբ տպագրում է Ջ. Գարիբալդու կոչը՝ գնահատելով այն որպես «լսելու արժանի բան»: Պարբերականի պատմելով՝Ջ. Գարիբալդին, իր հայրենակիցներից ակնկալելով «նորանոր եւ մեծամեծ քաջութեանց» գործողություններ, հորդորում է համախմբվել և մի վերջին պատերազմ մղել ընդդեմ օտարի բռնակալության: Նա հույս է հայտնում, որ, 1860թ. պայքարի ելած հազար կամավորների փոխարեն, 1862թ. ոտքի կելնեն միլիոն իտալացիներ, որոնք ավստրիացիների դատաստանն իրենց ձեռքով կտեսնեն և ժամ առաջ կտոնեն հաղթանակի հանդեսը: «Հայտնի բան է,- գրում է ամսագիրը, որ իտալական դիւցազնին այսպիսի խօսքերը մեծ ոյժ ունին եւ պիտի ունենան իւր հայրենակցացը վրայ»[104]:*

*«Մասյաց աղավնին» քաջատեղյակ էր, որ Ջ.Գարիբալդու կոչով երեք հազար իտալացիներ Սիցիլիայում միացել են նրան, ուստի «Իտալիան դարձեալ մեծ վրդովմունքի մէջ է»: Հասկանալով, որ Ջ. Գարիբալդու նոր արշավանքի նպատակը Հռոմն ազատագրելն է, ամսագիրը միաժամանակ իրավացիորեն նկատում է, որ Ջ. Գարիբալդու՝ «Հռոմ կամ մահ» կարգախոսը երկպառակություն է առաջ բերել գարիբալդիականների և Վիտորիո Էմմանուել II թագավորի կառավարության միջև: Թագավորը «սաստիկ խօսքերով կդատապարտէ Կարիպալտիի գործերը», ուստի հրովարտակով դիմել է իտալացիներին և հորդորել զգուշանան Ջ.Գարիբալդու «վնասակար անհամբերութենէ»: Նա խոստացել է, որ երբ մեծ գործողություններ իրականացնելու ժամանակը հասնի, «ինքը պատրաստ է իսկոյն ձայնը հանելու»[105]: Ամսագիրն իրավացի է. Վիտորիո Էմմանել II–ն իր հրովարտակում Ջ. Գարիբալդուն խռովարար անվանեց, իսկ վարչապետ Ռ. Ռատտացցին Պալերմոյի պրեֆեկտին կարգադրեց նրա նկատմամբ եռանդուն քայլեր ձեռնարկել՝ ընդհուպ մինչև ձերբակալելը[106]:*

*«Մասյաց աղավնու» դիտարկմամբ՝ արշավանքը դադարեցնելու թագավորի հորդորը «Կարիպալտիին փոյթ չեղաւ»[107]: Նա իր կամավորներով շարժվեց դեպի Մեսինա, 1862թ. օգոստոսի 29-ին Ասպրոմոնտե լեռան վրա հարկադրաբար ընդհարվեց թագավորական զորքի հրամանատար գնդապետ Պալլավիչինիի հետ, պարտություն կրեց, երկու տեղից վիրավորվեց և իր որդի Մենոտտի հետ «թշնամեաց ձեռքն ընկաւ»: Միանգամայն հավաստի ներկայացնելով Ասպրոմոնտեի եղբայրասպան կռիվը [108] և թագավորական զորքին համարելով Ջ.Գարիբալդու թշնամի՝ «Մասյաց աղավնին» չի թաքցնում զարմանքը տեղի ունեցածի կապակցությամբ: «Զարմանալի տեսարան,- գրում է ամսագիրը,-Իտալիան ազատողն ու Վիկտոր Էմմանուելին ձեռքը տուողը այնքան վեհանձնությամբ նոյն միջոցին նոյն թագաւորին զօրացը ձեռքը գերի բռնուեցաւ խեղճութեամբ»[109]:*

*Մարտի դաշտում վիրավոր Ջ. Գարիբալդուն գնդապետ Պալլավիչինին, գլխարկը հանելով, ծնկի իջավ և խնդրեց անձնատուր լինել: Ջ. Գարիբալդին ենթարկվեց, բայց նրա հետ անհարգալից վարվեցին, բանտարկեցին նախ՝ Վարինիանո բերդում, այնուհետև՝ տեղափոխեցին Սպեցա[110]: Այս ամենին քաջատեղյակ՝ «Մասյաց աղավնին»*

Ջ. Գարիբալդու հետ պատահած «ականկալ դիպուածէն ետքը» դժվարանում է կանխատեսել, թե ինչով կավարտվի Իտալիայի ներկա անորոշ վիճակը: Նրա պայքարը համեմատելով իտալական մեծ թատերգության չորրորդ արարի հետ՝ ամսագիրը համոզմունք է հայտնում, որ հինգերորդ արարում «ավելի փառաւոր կամ ահաւոր կերպով պիտի լուծուի վերջին կնճիռը»[111]: Իտալական ազատագրական պայքարի հաջողությունը «Մասյաց աղավնին» կապում է հասարակական պահանջով բանտարկությունից ազատ արձակված, եվրոպական բժիշկների օգնությամբ վերքերը բուժած[112] Ջ.Գարիբալդու հետ: Ամսագիրը հավատում է, որ 1863 թվականին, անշուշտ, բացվելու է «եւրոպական մեծամեծ խնդրոց լուծուելուն ահագին տեսարանը»[113], և Իտալիան միավորվելու է: Ամսագրի համոզմունքը հիմնված էր այն բանի վրա, որ Ասպրոմոնտեում պարտություն կրած, հայրենիքի ազատությունը տենչող Ջ. Գարիբալդին «հանգիստ պիտի չառնու՝ մինչեւ որ փառաւորագոյն յաղթութեամբ մը իւր աղօտացեալ փառացը վրէժը չառնու»[114]:

«Մասյաց աղավնու» կանխատեսումը, 1863թ. իտալական խնդրի լուծման հետ կապված, չարդարացավ, քանզի ոչ Ջ. Գարիբալդին, ոչ էլ Վիտորիո Էմմանուել II թագավորը Հռոմը և Վենետիկը ազատագրելու համար նոր պատերազմ չսկսեցին: Չնայած դրան՝ Ջ.Գարիբալդու գործունեության նկատմամբ ամսագրի հետաքրքրությունը չթուլացավ: «Մասյաց աղավնին» շարունակում է տեղեկություններ տալ նրա առողջական վիճակի, Լոմբարդիայում շրջագայության ժամանակ իտալացիների խանդավառ ընդունելությանն արժանանալու, Անգլիա մեկնելու հրավեր ստանալու, եվրոպական շատ երկրներում հանրաճանաչ լինելու, բարի համբավ և բարձր հեղինակություն վայելելու մասին:

Ամփոփելով 1863թ. քաղաքական տարվա արդյունքները՝ «Մասյաց աղավնու» խմբագիր Գ. վրդ. Այվազովսկին իրատեսորեն փաստում է, որ միասնական հայրենիք ունենալու իտալացիների բաղձանքը չկատարվեց: Նա լավ էր հասկանում, որ քանի դեռ Վենետիկն ու Հռոմը չեն ազատագրվել և միացել Իտալական թագավորությունը, միասնական իտալական պետությունը կայացած չէ: Գ. վրդ. Այվազովսկին հավատում էր, որ «պատերազմական հոգւով լցուած, ազգային ազատութեան կրակով վառուած»[115] իտալացիներն, իրենց դյուցազն Ջ.Գարիբալդու գլխավորությամբ, օտարի տիրապետության դեմ պայքարը շարունակելու մտադրությունը «անպատճառ ի գործ պիտի դնեն, որպեսզի առաջ Վենետիկն ազատեն և յետոյ Հռոմը»[116]:

Իտալիայից ստացված լուրերի վերլուծության հիման վրա՝ «Մասյաց աղավնին» հանգում է այն եզրակացության, որ իտալացիներն իրենց վերջնական ազատագրման հույսը կապում են 1864 թվականի և «սքանչելի ազատարարի» հետ: Ամսագիրը բարձր է գնահատում Ջ.Գարիբալդու մարդկային որակները, նրան անվանում է «քաջ», «իտալական դյուցազն», «գերահռչակ», «համբավավոր», «հայրենասեր», «Իտալիայի փրկիչ», «մեծ ազատարար», «Իտալիոյ մեծահամբաւ զորավար», «հայրենիքի ազատության սիրով վառված զորավար», ով պատրաստ է անձնազոհության՝ հանուն հայրենիքի փրկության և ազատության: Ամսագիրը հավատում էր, որ Ջ.Գարիբալդին առաջիկայում անպայման շարունակելու է իր պայքարը, որպեսզի իտալացիները ձգտեն ձեռք բերել իրենց «երկու մեծամեծ ազատութիւնները»: Դրանցից մեկն ամսագիրը համարում է Վենետիկի ազատագրվելը Ավստրիայի, իսկ երկրորդը՝ Հռոմի ազատագրվելը Պիուս IX պապի և Ֆրանսիայի տիրապետությունից: Իտալացիների ազատության ջատագով «Մասյաց աղավնին» նրանց մաղթում է՝ «Աստված չամըչընէ»[117]:

Իտալական ազատագրական պատերազմը դեռևս չավարտված՝ «Մասյաց աղավնին» դեռ 1861թ. համոզմունք էր հայտնում, որ ուշ թե շուտ Իտալիան անպայման միավորվելու է և համալրելու Եվրոպայի առաջատար պետությունների շարքը[118]: Նույն թվականին ամսագիրը վստահաբար հավատում էր, որ Հռոմը՝ որպես Իտալիայի

*սիրտ, «երբևիցէ պիտի միանայ իտալական թագաւորութեան հետ, և անոր մայրաքաղաքը պիտի լինի[119]:*

*Ջ.Գարիբալդու պայքարի հաջողության հարցում միշտ լավատես, նրա նկատմամբ հավատը երբեք չսասանած «Մասյաց աղավնին» չդարձավ Իտալիայի միավորման ժամանակակիցը, քանի որ 1865թ. դեկտեմբերին ամսագիրը դադարեց լույս տեսնելուց: 1866թ. Ավստրիայի դեմ իտալա-պրուսական պատերազմին իր կամավորներով մասնակցած Ջ.Գարիբալդին Թիրոլի լեռներում հաղթանակներ տարավ ու կրկին վիրավորվեց: Պատերազմի արդյունքում Վենետիկն անցավ Իտալական թագավորությանը: 1870թ. ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ ֆրանսիական կայազորը դուրս բերվեց Հռոմից, Պիոս IX պապը հրաժարվեց իր աշխարհիկ իշխանությունից, Հռոմը միացավ Իտալական թագավորությանը: 1871թ. հոկտեմբերի 2-ի հանրաքվեի արդյունքով Հռոմը դարձավ Իտալիայի մայրաքաղաքը[120]: Ջ.Գարիբալդու երկար տարիների ազատագրական պայքարի շնորհիվ՝ իտալական միասնական պետության կազմավորումը դարձավ իրողություն: Իտալիայի միավորման անխուսափելիությունն ու անհրաժեշտությունը, որի մասին իր բազմաթիվ հրապարակումներում շարունակ գրում էր «Մասյաց աղավնին», իրականություն դարձավ:*

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


1. Տե՛ս «Բազմավեպ», Վենետիկ, 1848, 1 մայիսի, էջ 134-141:
2. Նույն տեղում, էջ 137:
3. Նույն տեղում, էջ 141:
4. Երիցեան Ա., Վենետիկի Մխիթարեանք, Թիֆլիս, 1883, էջ 131:
5. «Բազմավեպ», 1848, 1 մայիսի, էջ 141:
6. Տե՛ս История дипломати. Сост. А. Лактионов. М., 2009, стр. 522-523:
7. Տե՛ս Дж. Берти. Россия и итальянские государства в период Рисорджименто. Пер с ит., М., 1959, стр. 648; История Италии. Под ред. К. Ф. Мизиано, т. 2, М., 1970, стр.240.
8. Տե՛ս В. Е. Невлер (Вилин). Джузеппе Гарибальди-национальый герой Италии. М., 1959, стр. 39-45.
9. Կարինյան Ա., Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, Երևան, 1960, էջ 378:
10. Իտալական ազատագրական պայքարի տարիներին Գ. վրդ. Այվազովսկին կայացած պատմաբան էր, Ռուսաստանի և Օսմանյան կայսրության պատմության մասին ուսումնասիրությունների և մի շարք թարգմանությունների հեղինակ: Տե՛ս Գ. Այվազովսկի, Համառօտ պատմութիւն Ռուսաց, Վենետիկ, 1836, Պատմութիւն Օսմանեան պետութեան, հ. 1-2, Վենետիկ, 1841:
11. «Մասյաց աղավնի», Թեոդոսիա, 1860, հունվար, թիվ Ա, էջ 18:
12. «Մասյաց աղավնի», 1861, 15 մայիսի, թիվ Ժ, էջ 119:
13. Նույն տեղում, էջ 117:
14. «Մասյաց աղավնի», 1861, 1 հուլիսի, թիվ ԺԳ, էջ 156:
15. Նույն տեղում:
16. «Մասյաց աղավնի», 1860, հունվար, թիվ Ա, էջ 16:
17. «Մասյաց աղավնի», 1860, մարտ, թիվ Գ, էջ 51:
18. Տե՛ս Дж. Гарибальди. Мемуары. Пер. с ит., М., 1966, стр. 15-21.
19. «Մասյաց աղավնի», 1860, մարտ, թիվ Գ, էջ 51:

20. Տե՛ս А. Я. Лурье. Гарибальди. М., 1957, с. 36-38, 44-45; В. Е. Невлер. Указ. соч. стр. 6-8.
21. «Մասյաց աղավնի», 1860, մարտ, թիվ Գ, էջ 52:
22. Տե՛ս В. Е. Невлер. Указ. соч., с. 8-9; А. Я. Лурье. Указ. соч., стр. 45-70.
23. «Մասյաց աղավնի», 1860, մարտ , թիվ Գ, էջ 52:
24. Նույն տեղում:
25. Տե՛ս В. Е. Невлер. Указ. соч., с 8-9; А. Я. Лурье . Указ. соч., стр. 61-68.
26. «Մասյաց աղավնի», 1860,մարտ, թիվ Գ, էջ 52:
27. Տե՛ս А. Я. Лурье. Указ. соч., стр. 63.
28. А. Я. Лурье. Указ. соч., стр. 54.
29. Տե՛ս А. Я. Лурье. Указ. соч., стр. 62.
30. «Մասյաց աղավնի», 1860, մարտ, թիվ Գ, էջ 52:
31. В. Е. Невлер. Указ. соч., стр. 9; А. Я. Лурье. Указ. соч., стр. 93,173.
32. А. Я. Лурье. Указ. соч., стр. 86.
33. Տե՛ս С. Морамарко. Масонство в прошлом и настоящем. Пер.с. ит., М., 1990, стр. 122, 278-279; Дж. Ридли. Фримасоны. Пер. стр. фр., М., 2007, стр. 289.
34. А. Я. Лурье. Указ. соч., стр. 92.
35. «Մասյաց աղավնի», 1860, մարտ, թիվ Գ, էջ 52:
36. Տե՛ս Дж. Гарибалди. Мемуары, с. 197; В. Е. Невлер. Указ. соч., стр. 18; А. Я. Лурье. Указ. соч., стр. 139;
37. «Մասյաց աղավնի», 1860, մարտ, թիվ Գ, էջ 52:
38. «Մասյաց աղավնի», 1860, մարտ, թիվ Գ, էջ 52:
39. История Италии, т. 2, стр. 206; В. Е. Невлер. Указ. соч., стр. 17; А. Я. Лурье. Указ. соч., стр. 131.
40. «Մասյաց աղավնի», 1860, մարտ, թիվ Գ, էջ 52:
41. Տե՛ս А. Я. Лурье. Указ. соч., с. 146; В. Е. Невлер. Указ. соч., стр. 21; История Италии, т. 2, стр. 217-218.
42. «Մասյաց աղավնի», 1860, մարտ, թիվ Գ, էջ 52:
43. «Մասյաց աղավնի», 1860, թիվ Ա, էջ 18:
44. «Մասյաց աղավնի», 1860, թիվ Բ, էջ 37:
45. Տե՛ս История Италии, т. 2., стр. 223; История Франции. Отв. ред. А.З.Манфред, т.2, М., 1973, стр. 351; История XIX века. Под ред. Лависса и Рамбо, т. 5, М., 1938, стр. 276.
46. «Մասյաց աղավնի», 1860, թիվ Բ, էջ 37:
47. А. Я. Лурье. Указ. соч., стр. 166.
48. «Մասյաց աղավնի», 1860, հունիս, թիվ Զ, էջ 103:
49. Տե՛ս А. Дебидур. Дипломатическая история Европы 1815-1870, т.2, Ростов-на Дону,1995, стр. 186; История Италии, т. 2., стр. 228.
50. «Մասյաց աղավնի», 1860, հունիս, թիվ Զ, էջ 103:
51. Տե՛ս История Италии, т. 2., стр. 228; А. Дебидур. Указ. соч., т. 2., стр. 194.
52. «Մասյաց աղավնի», 1860, հունիս, թիվ Զ, էջ 103:
53. Տե՛ս История Италии, т. 2., стр. 228.
54. Տե՛ս А. Я. Лурье. Указ. соч., стр. 184.
55. «Մասյաց աղավնի», 1860, հունիս, թիվ Զ, էջ 103:
56. Տե՛ս История Италии, т. 2., стр. 232; В. Е. Невлер. Указ. соч., стр. 27; А. Я. Лурье. Указ. соч., стр. 190, 194.
57. «Մասյաց աղավնի», 1860, հունիս, թիվ Զ, էջ 103:

58. Տե՛ս А. Дебидур. Указ. соч., т. 2., стр. 190-191.
59. «Մասյաց աղավնի», 1860, հունիս, թիվ Զ, էջ 103:
60. «Մասյաց աղավնի», 1860, հուլիս, թիվ Է, էջ 120:
61. «Մասյաց աղավնի», 1860, հոկտեմբեր, թիվ Ժ, էջ 165:
62. «Մասյաց աղավնի», 1860, հոկտեմբեր, թիվ Ժ, էջ 165:
63. Տե՛ս История Италии, т. 2., стр. 233; А. Я. Лурье. Указ. соч., стр. 198.
64. «Մասյաց աղավնի», 1860, հոկտեմբեր, թիվ Ժ, էջ 165:
65. Նշվ. աշխ., էջ 162:
66. Տե՛ս Дж. Гарибальди, Мемуры, с. 291; А. Я. Лурье. Указ. соч., стр. 208, В. Е. Невлер. Указ. соч. стр. 29, История Италии, т. 2, стр. 234.
67. «Մասյաց աղավնի», 1860, հոկտեմբեր, թիվ Ժ, էջ 165:
68. А. Я. Лурье, Указ. соч., стр. 212.
69. История Италии, т. 2, стр. 233, 237; А. Я. Лурье. Указ. соч., с. 215; В. Е. Невлер.Указ. соч., с. 29-31; Дж. Гарибалди. Мемуары, стр. 296-301.
70. «Մասյաց աղավնի», 1860, հոկտոմբեր, թիվ Ժ, էջ 165:
71. Նույն տեղում:
72. А. Я. Лурье. Указ. соч., стр.217.
73. «Մասյաց աղավնի», 1860, հոկտոմբեր, թիվ Ժ, էջ 165:
74. Նույն տեղում:
75. «Մասյաց աղավնի», 1860, հոկտեմբեր, թիվ Ժ, էջ 165:
76. Տե՛ս А. Я. Лурье. Указ. соч., стр. 218-219.
77. «Մասյաց աղավնի», 1860, նոյեմբեր, թիվ ԺԱ, էջ 181:
78. Տե՛ս А. Я. Лурье.Указ. соч., стр.219.
79. А. И. Герцен. Былое и думы. М., 2007, с. 346; А. Я. Лурье. Указ. соч., стр. 220; В. Е. Невлер. Указ. соч., стр. 3
80. « Մասյաց աղավնի», 1861, 15 հունվարի, թիվ Բ, էջ 22:
81. Տե՛ս В.Е. Невлер. Указ. соч., стр. 32, А. Я. А. Лурье. Указ. соч., стр. 220.
82. Дж. Гарибальди. Мемуары, стр. 304.
83. «Մասյաց աղավնի», 1861, 15 հունվարի, թիվ Բ, էջ 22:
84. Նույն տեղում:
85. А. А. Я. Лурье. Указ. соч., стр. 221.
86. «Մասյաց աղավնի», 1861, 15 հունվարի, թիվ Բ, էջ 22:
87. «Մասյաց աղավնի», 1860, նոյեմբեր, թիվ ԺԱ, էջ181:
88. «Մասյաց աղավնի», 1861, 1 փետրվարի, թիվ Գ, էջ 35:
89. Նույն տեղում:
90. «Մասյաց աղավնի», 1861, 15 հունվարի, թիվ Բ, էջ 21:
91. «Մասյաց աղավնի», 1861, 15 մայիսի, թիվ Ժ, էջ119:
92. «Մասյաց աղավնի», 1861, 1 հունիսի, թիվ ԺԱ, էջ130:
93. Տե՛ս История XIX века, т. 5, стр. 286; Дж. Канделоро, Указ. соч., т. 5, стр. 110.
94. Дж. Канделоро. Указ. соч., стр. 110.
95. «Մասյաց աղավնի», 1861, 1 հունիսի, թիվ ԺԱ, էջ130:
96. История XIX века, т. 5, стр. 287, Дж. Канделоро, Указ. соч., стр. 176.
97. Дж. Канделоро, Указ. соч., с. 163-165.
98. «Մասյաց աղավնի», 1861, 15 հունիսի, թիվ ԺԲ, էջ 144:
99. «Մասյաց աղավնի», 1861, 1 հոկտեմբերի, թիվ ԺԹ, էջ 225:
100. «Մասյաց աղավնի», 1861, 15 նոյեմբերի, թիվ ԻԲ, էջ 264:
101. «Մասյաց աղավնի», 1861, 15 հունիսի, թիվ ԺԲ, էջ144:

102. «Մասյաց աղավնի», 1861, 1 ապրիլի, թիվ է, էջ 81:
103. Տե՛ս Дж. Гарибальди. Мемуары, с. 307; История Италии, т. 2, стр. 245; В.Е. Невлер. Указ. соч., стр. 33, А. Я. Лурье. Указ. соч., стр. 224-225.
104. «Մասյաց աղավնի», 1861, 1 հունիսի, թիվ ԺԱ, էջ129:
105. «Մասյաց աղավնի», 1862, 15 օգոստոսի, թիվ ԺԵ, էջ177:
106. Տե՛ս А. Я. Лурье. Указ. соч., стр. 226; В.Е. Невлер. Указ. соч., стр. 33; История Италии, т. 2, стр. 245.
107. «Մասյաց աղավնի», 1862, 15 օգոստոսի, թիվ ԺԵ, էջ177:
108. Տե՛ս Дж. Гарибальди. Мемуары, стр. 310-311.
109. «Մասյաց աղավնի», 1862, 15 սեպտեմբերի, թիվ ԺԸ, էջ 214:
110. Տե՛ս Дж. Гарибальди. Мемуары, стр. 311; А. Я. Лурье. Указ. соч., стр. 229.
111. «Մասյաց աղավնի», 1862, 15 սեպտեմբերի, թիվ ԺԸ, էջ 214:
112. А. Я. Лурье. Указ. соч., стр. 230.
113. «Մասյաց աղավնի», 1862, 15 նոյեմբերի, թիվ ԻԲ, էջ 263:
114. «Մասյաց աղավնի», 1863, 15 հունվարի, թիվ 1-2, էջ 27:
115. «Մասյաց աղավնի», 1863, 15 հուլիսի, թիվ 13-14, էջ 224:
116. «Մասյաց աղավնի», 1864, 15 փետրվարի, թիվ 2, էջ 56:
117. «Մասյաց աղավնի», 1864, 15 հունվարի, թիվ 1, էջ 18:
118. Տե՛ս «Մասյաց աղավնի», 1861, 15 մայիսի, թիվ Ժ, էջ 119:
119. «Մասյաց աղավնի», 1861, 1 սեպտեմբերի, թիվ ԺԷ, էջ 203:
120. Տե՛ս Дж. Канделоро, Указ. соч., т. 5, стр. 418-424; История XIX века, т. 5, стр. 303-304; История Италии, т. 2, стр. 251.


## ԱՄՓՈՓԱԳԻՐ

### «Մասյաց աղավնի» ամսագիրը Զուզեպպե Գարիբալդու ազատագրական պայքարի մասին

**Ֆելիքս Մովսիսյան**

XIX դարի իտալական ազատագրական պայքարը լայն արձագանք է գտել 1860-1865թթ. Թեոդոսիայում Գաբրիել վարդապետ Այվազովսկու խմբագրությամբ լույս տեսնող «Մասյաց աղավնի» ամսագրում: Գ. վրդ. Այվազովսկին հայ ազգային պահպանողական հոսանքի այն երևելի դեմքերից ու խմբագիրներից էր, ով դեռևս 1848թ. Վենետիկի իրադարձություններից քաջատեղյակ էր իտալական ազգային –ազատագրական պայքարի խնդրին: Խմբագրի փորձառությունը, քաղաքական իրադարձությունների վերաբերյալ պատմաբանի ընկալումը, եվրոպական մի շարք լեզուների իմացությունը Գ. վրդ. Այվազովսկուն հնարավորություն էր տալիս անկաշկանդ ներկայացնել իտալական խնդիրը: Եվրոպական մամուլի լրատվության և ստացված պաշտոնական լուրերի սեփական ընկալման ու վերլուծության հիման վրա «Մասյաց աղավնին» ներկայացնում է Զուզեպպե Գարիբալդու պայքարը: Ամսագիրը 1859թ. սկսված իտալական երկրորդ պատերազմի գլխավոր դերակատարը համարում է Զ. Գարիբալդուն: «Մասյաց աղավնին» նրա գլխավորած պայքարը համարում է ազատագրական, որը նպատակ էր հետապնդում թոթափել ավստրիական ատելի լուծը:

Գ. վրդ. Այվազովսկին ափսոսանք է հայտնում, որ պատերազմում հաղթանակած Զ.Գարիբալդու «կարմիրշապիկավորների» և իտալացիների բաղձանքը չկատարվեց, և Իտալիան չմիավորվեց: Ամսագիրն իր բազմաթիվ հրապարակումներում իրավացիորեն առաջ էր տանում այն միտքը, որ 1861թ. Իտալական թագավորության հռչակումը սկիզբ է դնում Իտալիայի ամբողջական միավորմանը: «Մասյաց աղավնին» Վենետիկի և Հռոմի ազատագրումը և դրանց միավորումը Իտալական թագավորությանը կա-

պում է բացառապես Ջ.Գարիբալդու պայքարի հետ: Ամսագիրը Ջ.Գարիբալդուն բնութագրում է որպես քաջազուն զինվորական, Իտալիայի փրկիչ, հայրենիքի հրաշալի ազատարար, հայրենասեր, ում կյանքի գլխավոր նպատակը հայրենիքի ազատագրությունը, անկախությունը և միավորումն է:

## РЕЗЮМЕ

## Журнал «Масьяц агавни» («Масисский голубь») об освободительной войне Джузеппе Гарибальди

**Феликс Мовсисян**

***Ключевые слова:*** Италия, свобода, объединение, борьба, Гарибальди, «Масьяц агавни», патриот, храбрец, освободитель, полководец.

Итальянская освободительная борьба XIX века получила широкое освещение в журнале «Масьяц агавни», который издавался в Феодосии в 1860-1865 гг. под редакцией Габриэла архимандрита Айвазовского. Габриэл архимандрит Айвазовский был одним из видных деятелей и редакторов армянского национально-консервативного течения, который был хорошо знаком с проблемой итальянской национально-освободительной борьбы еще с 1848 года сразу после венецианских событий. Опыт редактора, отношение к политическим событиям с позиции историка, знание нескольких языков дали возможность Габриэлу архимандриту Айвазовскому обсуждать итальянский вопрос непосредственно из первых рук.

На страницах журнала «Масьяц агавни» он представлял борьбу Джузеппе Гарибальди, исходя из собственного восприятия и анализа информации, подчерпнутой из европейской прессы, и известий, полученных из официальных источников. Журнал, начиная с 1859 года, главным действующим лицом Второй итальянской войны считал Дж. Гарибальди. Возглавляемую им борьбу «Масьяц агавни» оценивал как освободительную, целью которой было свержение ненавистного австрийского ига.

Габриэл архимандрит Айвазовский выражал сожаление, что заветная мечта победивших в войне «красных рубашек» Дж. Гарибальди и всех итальянцев не осуществилась, и объединение Италии не произошло. Журнал в своих многочисленных публикациях справедливо выдвигал мысль о том, что провозглашение Итальянского королевства в 1861 году положило начало всеобщего объединения Италии. Освобождение Венеции и Рима и их объединение с Итальянским королевством журнал «Масьяц агавни» однозначно связывал с борьбой Дж. Гарибальди. Журнал характеризовал Дж. Гарибальди как храброго воина, спасителя Италии, чудесного освободителя Родины, патриота, главной целью жизни которого являлись освобождение, независимость и объединение Отечества.

## SUMMARY

## The Magazine «Masyats Aghavni» («Masyats Dove») on the Liberation Struggle of Giuseppe Garibaldi

**Felix Movsisyan**

***Keywords:*** Italy, freedom, union, struggle, Garibaldi, «Masyats aghavni», patriotic, brave, a liberator, a commander.

The Italian liberation struggle of the XIX century found a wide response in 1860-1865 in Theodosia, «Masyats Aghavni» Magazine, published by Gabriel Aivazovsky. G.Aivazovsky was one of the prominent figures and editors of the Armenian national conservative current, who had been well aware of the problem of the Italian national-liberation struggle held since 1848 events in

Venice. The experience of the editor, the historian's perception of political events, and the knowledge of a number of European languages gave him an opportunity to present the Italian problem freely. Based on his own perception and analysis of the official news in the European press, «Masyats Aghavni» presented the struggle of Giuseppe Garibaldi. The magazine considered Garibaldi the main leader of 1859 Second Italian war. «Masyats Aghavni» evaluated his struggle as liberation struggle against hated Austrian yoke.

G. Aivazovsky regrets that the desire of Italians and the «red shirts» of Garibaldi, who had won the war, didn't come true and Italy did not unite. In its numerous publications, the magazine rightly promoted the idea that the proclamation of the Kingdom of Italy in 1861 would mark the beginning of the total unification of Italy. «Masyats Aghavni» connects the unification of Venice, Rome and their unification with the Italian kingdom exclusively with the struggle of J. Garibaldi. The magazine describes Garibaldi as a brave soldier, a savior of Italy, a wonderful liberator of the homeland, a patriot, whose main goal in life is the liberation of the homeland, independence and union.